**Բաժնետիրական ընկերության պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը**

| **Կազմակերպական-իրավական տեսակը** | **«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք** | **«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք** | **ՀՀ քաղաքացիական օրենսգիրք** |
|---|---|---|---|
| Բաժնետիրական ընկերություն | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չեն | Բաժնետիրական ընկերության պետական գրանցումը մերժելու հիմքերն են՝<br>1) իրավաբանական անձի կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը (օրինակ՝ հիմնադրի (հիմնադիրների) որոշումը կամ հիմնադիրների ժողովի արձանագրությունը ստորագրված չէ օրենքով սահմանված բոլոր լիազոր անձանց կողմից).<br>2) օրենքով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը.<br>3) ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին *(օրինակ՝*<br>*- իրավաբանական անձի հիմնադրման մասին որոշումն ընդունված է օրենքով պահանջվող ձայների ոչ բավարար քանակի առկայությամբ,*<br>*- հիմնադրի (հիմնադիրների) որոշումը կամ հիմնադիր ժողովի արձանագրությունը չի բովանդակում այն դրույթները, որոնք օրենքով սահմանված են տվյալ կազմակերպաիրավական տեսակի իրավաբանական անձի ստեղծման համար)* կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին *(օրինակ՝ ներկայացված փաստաթղթերում առկա է գրանցամատյանում գրառման ենթակա և իրար հակասող տեղեկություններ)*, բացառությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրության, որի անհամապատասխանությունն օրենքին հիմք չէ իրավաբանական անձի պետական գրանցումը մերժելու համար *(բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված կանոնադրության մեջ բացակայում են* | ՀՀ քաղաքացիական օրենսգրքով պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չեն |

| | | | |
|---|---|---|---|
| | | *իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում պարտադիր գրառման ենթակա տեղեկություններ կամ դրանք ներկայացված են թերի),*<br>4) նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկված և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելը.<br>5) անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում.<br>6) ռեդոմիցիլացման նպատակով դիմել է այն պետության իրավաբանական անձ, որը նշված է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետությունների ցանկում, որոնց իրավաբանական անձինք չեն կարող ռեդոմիցիլացվել Հայաստանի Հանրապետության տարածքում: | |

**Բաժնետիրական ընկերության փոփոխությունների պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը**

| **Կազմակերպական-իրավական տեսակը** | **«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք** | **«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք** | **ՀՀ քաղաքացիական օրենսգիրք** |
|---|---|---|---|
| Բաժնետիրական ընկերություն | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով փոփոխությունների պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չեն | Բաժնետիրական ընկերության փոփոխությունների պետական գրանցումը մերժելու հիմքերն են՝<br>1) իրավաբանական անձի փոփոխությունների՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված կարգի խախտումը (*օրինակ՝*<br>*- օրենքով պահանջվող որոշումն ընդունված է ոչ իրավասու անձի կողմից,*<br>*- երբ փակ բաժնետիրական ընկերության կապիտալի ավելացման կապակցությամբ բաժնետոմսեր են տեղաբաշխել բաց բաժանորդագրման միջոցով,*<br>*- կանոնադրական կապիտալի նվազեցման կամ վերակազմավորման ժամանակ պարտատերերին տեղեկացնելու օրվանից պատասխանների ստացման մեկամսյա ժամկետը չպահպանելը,*<br>*- բաց բաժնետիրական ընկերությունը ավելացնում է կանոնադրական կապիտալը բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով, բայց չունի այդ տեսակի հայտարարված բաժնետոմսեր,*<br>*- բաժնետիրական ընկերությունը նվազեցնում է կանոնադրական կապիտալը, սակայն գործող կանոնադրությամբ նախատեսված չէ,*<br>*- ներկայացված է փաստաթղթեր կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված գրանցում կատարելու համար, սակայն նվազեցում կատարելու մասին որոշումից չի անցել 60 օր).*<br>2) օրենքով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը կամ ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին *(օրինակ՝*<br>*- օրենքով պահանջվող որոշումն ընդունված է ձայների ոչ բավարար քանակի առկայությամբ,* | ՀՀ քաղաքացիական օրենսգրքով փոփոխությունների պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չեն |

| | | | |
|---|---|---|---|
| | | - *որոշման (արձանագրության) մեջ օրենքով պահանջվող դրույթի ընդունված (հաստատված) լինելու մասին տեղեկությունը բացակայում է կամ անորոշ է,*<br>- *ներկայացված փաստաթղթերում առկա է գրանցամատյանում գրառման ենթակա և իրար հակասող տեղեկություններ)* կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին, ընդ որում, առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության դրույթները օրենքին համապատասխանելու տեսանկյունից չեն ստուգվում *(բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված կանոնադրության մեջ բացակայում են իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում պարտադիր գրառման ենթակա տեղեկություններ կամ դրանք ներկայացված են թերի):*<br>3) առկա է իրավաբանական անձի փոփոխության գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատարանի համապատասխան որոշում կամ վճիռ: | |

**Բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունների գրառումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը**

| **Կազմակերպական-իրավական տեսակը** | **«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք** | **«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք** | **ՀՀ քաղաքացիական օրենսգիրք** |
|---|---|---|---|
| Բաժնետիրական ընկերություն | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով փոփոխությունների պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չեն | Բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունների գրառումը մերժելու հիմքերն են՝<br>1) խախտվել է լուծարման՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգը (օրինակ՝ չի կազմավորվել լուծարման հանձնաժողոց կամ չի նշանակվել լուծարող).<br>2) ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն կամ չեն համապատասխանում օրենքի պահանջներին *(օրինակ՝ պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետը պակաս է 2 ամսից կամ նշանակված չէ լուծարող (լուծարման հանձնաժողով):* | Լուծարման հանձնաժողովն http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում նրա լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից: |

**Բաժնետիրական ընկերության լուծարման պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը**

| **Կազմակերպական-իրավական տեսակը** | **«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք** | **«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք** | **ՀՀ քաղաքացիական օրենսգիրք** |
|---|---|---|---|
| Բաժնետիրական ընկերություն | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով փոփոխությունների պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չեն | Բաժնետիրական ընկերության լուծարման պետական գրանցումը մերժելու հիմքերն են՝<br>1) իրավաբանական անձանց լուծարման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը (օրինակ՝ կազմվել կամ հաստատվել է լուծարման հաշվեկշիռը, սակայն լուծարման մասին հայտարարություն տալու պահից չի անցել առնվազն 2 ամիս).<br>2) օրենքով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը.<br>3) ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքի պահանջներին.<br>4) օրենքով նախատեսված հարցումներին (ուղղված հանձնաժողով՝ իրավաբանական անձի՝ մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների ցանկում ներառված լինելու, ինչպես նաև հարկային մարմին՝ պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության գծով իրավաբանական անձի պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ) իրավաբանական անձի նկատմամբ հանձնաժողովի կողմից հարուցված և չավարտված վարչական վարույթի մասին կամ իրավաբանական անձի՝ հանձնաժողովի նկատմամբ պարտավորությունների առկայության մասին կամ պետական բյուջեի նկատմամբ հարկերի, տուրքերի կամ սոցիալական ապահովագրության գծով պարտավորությունների առկայության, դրանց չափի և ծագման հիմքերի մասին հստակ պատասխան ստանալը: | ՀՀ քաղաքացիական օրենսգրքով լուծարման պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չեն |